





ՏԵՂԵԿԱՆՔ



**ԿՈՆԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 թ.
տարեկան հաշվետվությունների
ոԼՍՈԼՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
արդյունքների վերաբերյալ**



ՏԵՂԵԿԱՆՔ

Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների
ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ

*Հետապոտությունն իրականացվել է Միացյալ Թագավորության միջազգային վարձացման
աջակցության շրջանակում, Միացյալ Թագավորության կառավարության կողմից:
Արտահայտված տեսակետները պարտադիր չեն, որ արտացոլեն Միացյալ Թագավորության
կառավարության պաշտոնական դիրքորոշումը:*

ՏԵՂԵԿԱԼՔ

Կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ

Սույն փաստաթղթով ներկայացվում են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (ԹԻՅԿ) կողմից Հայաստանում գրանցված կուսակցությունների 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքները:

Հետազոտության խնդիրն էր ստուգել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից կուսակցությունների ֆինանսավորման նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը և վերհանել առկա խնդիրները: Տեղեկանքում ներկայացվում են առաջարկություններ, որոնց նպատակն է բարելավել ԿԿՀ վերահսկողության արդյունավետությունը և այդպիսով՝ կուսակցությունների գործունեության թափանցիկությունը և հանրային հաշվետվողականությունը:

Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ռեեստրում 123 հաշվետու կուսակցություններից 118-ի հրապարակված 2024 թվականի ֆինանսական հաշվետվությունները: Տվյալները համադրվել են ՀՀ արդարադատության նախարարության իսրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից ստացված՝ Հայաստանում 2024 թվականին գործող կուսակցությունների թվի հետ: Ուսումնասիրվել են նաև պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների աուդիտորական եզրակացությունները և կուսակցությունների վարույթների վերաբերյալ տեղեկությունը կայքէջում՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ: Տվյալների համապատասխանության և արժանահավատության ստուգման համար ուսումնասիրվել են նաև կուսակցությունների այլ տարիների ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունները:

Վերհանված խնդիրներն՝ ըստ կուսակցությունների

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության տարեկան հաշվետվությունում կարելի է տեսնել մեկ միավոր անշարժ գույք, որը հանձնվել է կուսակցությանը վարձակալության՝ Էականորեն ցածր գնով կամ անհատույց օգտագործման: Համապատասխան տողում կադաստրային արժեքը նշված է 65 մլն դրամ, իսկ որպես հաշվարկված ոչ դրամային մուտք նշված է 2 մլն 400 հազար ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ հաշվետվությունում վարձակալության ծախս նշված չէ, կարելի է կարծել, որ անշարժ գույքը ոչ թե Էականորեն ցածր գնով, այլ անհատույց օգտագործման է տրված: Այս պարագայում, կուսակցության «Ոչ դրամային մուտք»-ի հաշվարկի տրամաբանությունը ողջամիտ կասկածի է ենթակա և, ըստ այդմ, ռիսկային է տարեկան նվիրատվությունների առավելագույն սահմանաչափի խախտման հնարավորությունը՝ հաշվի առնելով, որ սահմանաչափը 2 մլն 500 հազար է եղել 2024 թվականին:

«Արդար խոսք» կուսակցության տարեկան հաշվետվության նվիրատվությունների բաժնում կարելի է տեսնել շուրջ 30,000 ՀՀ դրամի նվիրատվություն, որի նվիրատուն նշված է «Թեյլ Սելլ»: Սա հանդիսանում է անանուն, հետևաբար՝ ոչ օրինական նվիրատվություն: ԿԿՀ

վարույթների կայքէջի ուսումնասիրությունից ելնելով՝ կարելի է ենթադրել, որ այս մասով վարույթ առկա չէ, և նվիրատվությունը, համաձայն օրենսդրության պահանջների, չի փոխանցվել պետական բյուջե:

«Արժանապատիվ ապագա» կուսակցության պարագայում կուսակցության ղեկավար մարմնի անդամի գույքի եկամուտների հայտարարագիրը չներկայացնելու համար վարույթ է հարուցվել կուսակցության ղեկավար Արմեն Դարբինյանի նկատմամբ: Սակայն վարույթը կարճվել է, երբ պարզվել է, որ Արմեն Դարբինյանը դադարել է կուսակցության ղեկավար հանդիսանալ: Այդուամենայնիվ, հասկանալի չէ՝ ինչու ներկայացված չէ պաշտոնի դադարեցնելու դրությամբ հայտարարագիրը: Ընդ որում, այս հարցադրումը կիրառելի է նաև այլ կուսակցությունների պարագայում:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացության մեջ կարելի է ծանոթանալ, որ կուսակցության մի տարածքային գրասենյակը գտնվում է Կապանի համայնքապետարանում, ինչը օրենսդրության խախտում է: Միաժամանակ, կուսակցության տարեկան հաշվետվության մեջ «Տարածքային ստորաբաժանումներ» բաժնում որևէ միավոր առկա չէ: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ կուսակցությունը պատշաճ կերպով չի լրացրել տարեկան հաշվետվությունը:

«Գործարար» կուսակցության տարեկան հաշվետվությունում նշված է, որ կուսակցությունը Գեղամ Բաղդասարյան անուն-ազգանունով անձից ընդհանուր առմամբ ստացել է 2,590,000 ՀՀ դրամ նվիրատվություն: Սա, եթե մեկ անձից է, այլ ոչ չէ նույն անուն-ազգանունով տարբեր անձերից, հանդիսանում է նվիրատվության տարեկան առավելագույն սահմանաչափի խախտում: ԿՀՀ կայքի վարույթների բաժնում այս մասով նախաձեռնված վարույթի մասին տեղեկություն առկա չէ:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության տարեկան հաշվետվության մեջ «Անդամավճարներ» բաժնում անդամավճար մուծող անձանց տվյալները պարզապես նշված են՝ «կուսակցության անդամներ»: Ընդ որում, այդ անդամներից մեկը թույլատրելի 1 մլն ՀՀ դրամի առավելագույն սահմանաչափը խախտել է՝ կատարելով 1,376,200 ՀՀ դրամի վճարում:

Հայաստանի դեմոկրատական կուսակցության տարեկան հաշվետվության մեջ նշված է, որ կուսակցությունը վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնելու տեսքով, որպես բնեղենով նվիրատվություն անշարժ գույք է ստացել: Որպես նվիրատու նշված է Երևանի քաղաքապետարանը, ինչը, համաձայն օրենսդրության, հանդիսանում է խախտում:

Հայաստանի ժողովրդական կուսակցության տարեկան հաշվետվությունում նշված է 5 տարածքային գրասենյակ, սակայն անշարժ գույքերի, բնեղենով նվիրատվությունների, ծախսերի մասով ոչինչ առկա չէ, ինչը տվյալների արժանահավատության նկատմամբ կասկած է հարուցում:

Հայաստանի հանրապետական կուսակցության 2023 թվականի հաշվետվությունում տարեվերջի դրությամբ նշված է թվով 39 անշարժ գույք, իսկ 2024-ին այդ թիվը կազմում է 64: 2024 թ. տարեկան հաշվետվությունում կուսակցությունը անշարժ գույքի ձեռքբերման ծախսեր չի նշել, հետևաբար անհասկանալի է ինչով է պայմանավորված անշարժ գույքի

միավորների աճը: Միաժամանակ, կուսակցության հաշվետվության աուդիտի եզրակացության մեջ նշված է, որ խնդիրներ առկա չեն, և հարցին անդրադարձ չկա:

«Հայոց համազգային միասնություն» կուսակցությունն իր հաշվետվությունում ներկայացրել է շուրջ 2,4 մլն ՀՀ դրամի «Այլ մուտք», ինչը թափանցիկության և ռիսկերի կառավարման տեսանկյունից արժանի է ստուգման:

«Հայք» լիբերալ կուսակցության նկատմամբ վարույթների էջից կարելի է տեղեկանալ, որ կիրառվել է վարչական տույժ 2023 թվականի տարեկան հաշվետվությունը չներկայացնելու համար: Նույն կուսակցությունը 2024 թվականի հաշվետվությունը ևս չի ներկայացրել, սակայն վարույթի մասին որևէ տեղեկություն առկա չէ:

«Հանրապետություն» կուսակցության հաշվետվությունում կարելի է տեսնել վեց միավոր անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման տեսքով բնեղենով նվիրատվություն: Ընդ որում, երկու միավորների կադաստրային արժեքները շուրջ 270 մլն և 130 մլն են, սակայն որպես հաշվարկված ոչ դրամային մուտք նշված է համապատասխանաբար մոտ 500 և 200 հազարական ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ հաշվետվությունում վարձակալության ծախս նշված չէ, կարելի է կարծել, որ վերոնշյալ միավորները «ոչ զեղչված», այլ ամբողջությամբ են որպես նվիրատվություն տրված: Այս պարագայում խիստ կասկածելի և անհասկանալի է «Ոչ դրամային մուտք»-ի հաշվարկի տրամաբանությունը և, ըստ այդմ, ռիսկային է տարեկան նվիրատվությունների առավելագույն սահմանաչափի խախտման հնարավորությունը:

«Շանթ» դաշինք ազգայնական կուսակցության ֆիզիկական անձանցից ստացված 63 նվիրատվությունների դեպքերից 59-ը տարեկան հաշվետվության մեջ նշված են որպես «անանուն», ինչը հակասում է «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին: Ավելին, մեկ դեպքով մուծված է 1,376,200 ՀՀ դրամի անդամավճար, մինչդեռ օրենքը սահմանում է ֆիզիկական անձի տարեկան անդամավճարի առավելագույն 1 մլն ՀՀ դրամի սահմանաչափ:

Պահպանողական կուսակցության տարեկան հաշվետվությունում նշված է 13 տարածքային գրասենյակ, սակայն հաշվետվության մեջ ո՛չ անշարժ գույքի, ո՛չ բնեղենով նվիրատվության և ո՛չ էլ վարձակալության վճարների մասով նշումներ առկա չեն:

Ռամկավար ազատական կուսակցությունը 2024 թվականին ունեցել է շուրջ 102 մլն ՀՀ դրամի մուտք՝ հիմնականում պայմանավորված անշարժ գույքի վաճառքով և 43 մլն ՀՀ դրամի ելք: Համաձայն «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի՝ կուսակցությունը պետք է անցներ պարտադիր աուդիտ, սակայն աուդիտ անցած կուսակցությունների [հրապարակված ցանկում](#) այս կուսակցության անվանումը բացակայում է: Հասկանալի չէ, թե ինչ պատճառով այն չի ենթարկվել աուդիտի: Նույն հարցադրումը կիրառելի է նաև Նախորդող 2023 թվականի համար, երբ Ռամկավար ազատական կուսակցությունը մոտ 40 մլն ՀՀ դրամի փոխառություն է ստացել, ինչը կուսակցությանը դարձնում էր պարտադիր աուդիտի ենթակա:

«Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության հաշվետվության նվիրատվությունների բաժնում նշված է, հավանաբար, իր կողմից հիմնադրած ՉԼՄ-ի և հրատարակչության կողմից կուսակցությանը փոխանցված շահույթը, որը պետք է լրացված

լիներ հաշվետվության համապատասխան բաժնում, ինչը, սակայն, արված չէ: Արդյունքում, այդ պատճառով, մի շարք տվյալներ՝ մասնաբաժնի, ստացված շահաբաժնի մասով հանրությանը հասանելի չեն:

«Քրիստոնեա Հայաստան» կուսակցությունն իր հաշվետվությունում նշել է երեք տարածքային գրասենյակ, սակայն անշարժ գույքերի, բնեղենով նվիրատվությունների, ծախսերի մասով ոչինչ առկա չէ, ինչը տվյալների արժանահավատության նկատմամբ կասկած է հարուցում:

«Օրինաց երկիր» կուսակցությունը 2024 թվականի տարեկան հաշվետվությունը չի ներկայացրել, սակայն վարույթների կայքէջում առկա չէ այս դեպքի վերաբերյալ որևէ վարույթ:

Եզրակացություն և առաջարկներ

Կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվություններում վերհանված խնդիրները և դրանցից շատերի առնչությամբ վարույթների բացակայությունը թույլ են տալիս եզրակացնել, որ ԿԿՀ-ն պատշաճ չի ուսումնասիրում հաշվետվությունները և ընթացք չի տալիս խնդիրներին: Առաջարկվում է՝ ԿԿՀ-ն վերանայի 2024 թվականի հաշվետվությունները և, ըստ անհրաժեշտության, հարուցի վարույթներ:

Ի լրումն, ԿԿՀ կատարողականի թերացման, հետազոտությամբ վեր են հանվել իրավակարգավորումներին առնչվող այլ խնդիրներ ու բացեր, որոնց հասցեագրման ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել իրատապ միջոցառումներ:

1. Կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտի եզրակացությունները, ընտրական շրջանում բանկային հաշիվների տեղեկանքները ԿԿՀ կայքում հրապարակվում են տարբեր էջերում, ինչը դժվարեցնում է տեղեկատվության հասանելիությունը ու որոնման հնարավորությունը:

Առաջարկ

Կուսակցություններին առնչվող տեղեկատվությունը՝ հաշվետվությունները, տեղեկանքներն ու աուդիտի եզրակացությունները, ԿԿՀ կայքում հրապարակել կենտրոնացված մոտեցմամբ:

2. ԿԿՀ կուսակցությունների հաշվետվությունների ռեեստրի էջում ոչ բոլոր կուսակցությունների հաշվետվություններն են արտացոլված, հարկավոր է լինում առանձին ընտրել «Կուսակցություն» հատվածից:

Առաջարկ

Տեխնիկապես ապահովել ԿԿՀ կուսակցությունների հաշվետվությունների ռեեստրի էջում բոլոր կուսակցությունների արտացոլված լինելը:

3. ԿԿՀ ռեեստրում արտացոլված կուսակցությունների գրանցման տարեթվերը չեն համընկնում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանն ուղղված հարցման արդյունքում ստացված տարեթվերի հետ: Օրինակ՝ 90-ականներին գրանցված կուսակցությունները նշված են

2003 թվականի գրանցումով: Ընդ որում, բաց համացանցային աղբյուրներում նույնպես չատերը 2003 թվականի գրանցմամբ են նշված: Խնդիրը հավանաբար պայմանավորված է կուսակցությունների գրանցման և գրանցման վկայականի ստացման տարեթվերի անհամապատասխանությամբ, սակայն այս բացը կարիք ունի հասցեագրման:

Առաջարկ

Ստուգել, ճշգրտել ու համապատասխանեցնել ԿԿՅ կուսակցությունների ռեեստրում նշված գրանցման տարեթվերը:

4. ԿԿՅ կայքում կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ռեեստրում հրապարակված հաշվետվություններից հնարավոր չէ հասկանալ, թե կուսակցությունը ինչ ժամկետներում է ներկայացրել իր հաշվետվությունը: Չնայած որ ժամկետով պայմանավորված՝ հաշվետվությունների բովանդակությունը չի փոխվում, ժամկետի վերաբերյալ տվյալների բացակայությունը թույլ չի տալիս վերահսկել դրանից բխող ԿԿՅ գործողությունները, օրինակ՝ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար վարույթ հարուցելու փաստը կամ այլ որոշումները:

Առաջարկ

ԿԿՅ կուսակցությունների հաշվետվությունների ռեեստրում նախատեսել, որ արտացոլվի տարեկան հաշվետվության հրապարակման ժամկետը:

5. Հաշվետվություններում հաճախ լրացված չեն անգամ ղեկավար կազմի վերաբերյալ տվյալները, ինչը էականորեն դժվարացնում է վերոնշյալ անձանց համար պարտադիր ներկայացնելու ենթակա գույքի և եկամուտների հայտարարագրերի ստուգումը և վերահսկողությունը:

Առաջարկ

Երաշխավորել կուսակցության ղեկավար կազմի վերաբերյալ տեղեկատվության արտացոլումը հաշվետվություններում, ինչը կարևոր է թե՛ հանրային վերահսկողության ու թափանցիկության, թե՛ ղեկավար կազմի անդամների հայտարարագրերը ստուգելու տեսանկյունից:

6. Տարածված խնդիր է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների 0-ական լինելը: Մինչդեռ, կուսակցություններն առնվազն ունենում են կենտրոնական գրասենյակներ, որոնք ենթադրաբար կամ կուսակցության սեփականությունն են, կամ վարձակալված են, կամ վերցված են անհատույց օգտագործման: Ցանկացած դեպքում տարեկան հաշվետվությունում այդ առնչությամբ պետք է լինի որևէ նշում, և չի կարող լինել 0-ական պատկեր: Բացի այդ, ողջամիտ կասկած է հարուցում նաև կոմունալ ծախսերի բացակայությունը: Եթե կենտրոնական գրասենյակը որևէ կերպ շահագործվել է, և կատարվել են կոմունալ ծախսեր, որոնք եթե իրենց հերթին մուծվել են ֆիզիկական անձանց կողմից, ապա դա պետք է արձանագրվի որպես բնեղենով նվիրատվություն: Այս խնդիրը նաև նշվել է «Հայրենիք» կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտորական եզրակացության մեջ: Խնդիրը սաստկանում է այն դեպքում, երբ կուսակցություններն իրենց հաշվետվություններում նշում են մի քանի տարածքային գրասենյակների առկայության մասին, բայց միաժամանակ ներկայացնում են 0-ական հաշվետվություններ:

Առաջարկ

Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքում վերհանել կենտրոնական և տարածքային գրասենյակների առկայության և ելքերի, բնեղենով նվիրատվությունների բացակայության անհամապատասխանությունը:

7. Մի շարք կուսակցությունների հաշվետվություններում առկա է նշում աշխատակիցների թվի մասին, սակայն միևնույն ժամանակ բացակայում են վարձատրության տողով ծախսերի մասը: Որոշ դեպքերում կուսակցության հաշվետվության մեջ որպես աշխատակից նշված են ղեկավար մարմնի անդամները, բայց մնացյալ դեպքերում վարձատրության կամ բնեղենով նվիրատվության տողերում ոչինչ լրացված չէ:

Առաջարկ

Ստուգել կուսակցությունների հաշվետվություններում նշված աշխատակիցների թվի, համապատասխան պայմանագրերի առկայության և աշխատավարձերի տողում նշումների բացակայության անհամապատասխանությունը, ըստ անհրաժեշտության՝ նախաձեռնել վարույթներ:

8. Կուսակցությունների տարեկան հաշվետվություններում հրապարակվում են նվիրատուների միայն անուն-ազգանունները, մինչդեռ հայրանունների բացակայությունը էականորեն բարդացնում է հանրային վերահսկողությունը:

Առաջարկ

Կուսակցությունների նվիրատուների տվյալների շարքում հրապարակել նվիրատուի անուն-հայրանուն-ազգանունը, ինչպես դա արվում էր ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային «Ազդարար» կայքում հրապարակվելու դեպքում:

9. Առկա իրավակարգավորումներով ֆիզիկական անձը կարող է տարվա կտրվածքով առկա առավելագույն սահմանաչափի սահմաններում նվիրատվություն կատարել և միաժամանակ առանց որևէ սահմանափակումների կուսակցությանը գումար հանձնել որպես փոխառություն: Սա հատկապես նախընտրական շրջանում կարող է հավասար մրցակցությունը խաթարող գործոն լինել: Միևնույն ժամանակ իրավաբանական անձը կարող է գույք վարձակալությամբ հանձնել շուկայականին մոտ արժեքով, մինչև 20 % ցածր, ինչը չնայած օրենսդրորեն թույլատրելի է, սակայն, ըստ էության, իրավաբանական անձի կողմից նվիրատվություն է կուսակցությանը:

Առաջարկ

Վերանայել օրենսդրական կարգավորումները՝ սահմանափակելով ֆիզիկական անձանց կողմից նվիրատվության սահմանաչափերը փոխառությունների միջոցով և իրաբանական անձանց կողմից նվիրատվության արգելքը շրջանցելու ռիսկերը:

10. Կուսակցությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ և ԿԿՀ որոշմամբ սահմանված տարեկան հաշվետվության ձևի և դրա լրացնելու կարգի տրամաբանությունն այնպես է կառուցված, որ կուսակցությունների կողմից ընտրությունների մասնակցության պարագայում իրենց հաշվից ընտրական գրավի վճարումը, նախընտրական հիմնադրամ փոխանցումները հայտնվում են «Այլ ելքեր» կատեգորիայի տակ: Նշված գումարները

զգալիորեն մեծ թվեր են, բայց դրանք փաստորեն դուրս են մնում հանրային վերահսկողությունից:

Առաջարկ

Վերանայել կուսակցությունների տարեկան հաշվետվության ձևը՝ ներառելով ելքերի բաժնում ընտրական գրավը և նախընտրական հիմնադրամ մուծումը արտացոլող առանձին կատեգորիաներ:

11. Հասկանալի չէ ապօրինի աղբյուրից ստացված նվիրատվությունները պետական բյուջե չփոխանցվելուց, այդ առնչությամբ վարչական տույժ նշանակելուց ու տուգանքը մուծելուց հետո այդ նվիրատվությունները պետական բյուջե վերադարձնելու պահանջի առկայությունը:

Առաջարկ

Հստակեցնել ապօրինի աղբյուրից նվիրատվությունը պետական բյուջե չփոխանցելու դեպքում պատասխանատվության միջոցի կիրառումից հետո նվիրատվության՝ պետական բյուջե վերադարձնելու կարգավորումները:

12. Հասկանալի չէ՝ արդյոք տարեկան պարտադիր աուդիտը դիտարկում է նաև նախորդող տարիների հաշվետվությունները, ուսումնասիրում փոփոխությունների համապատասխանությունն ու իրավաչափությունը:

Առաջարկ

Կուսակցությունների պարտադիր աուդիտորական ուսումնասիրությունը կազմակերպել այնպես, որ այն ներառի նաև նախորդող տարիների հաշվետվությունների, առկայության դեպքում աուդիտորական եզրակացության դիտարկումը: Ըստ անհրաժեշտության՝ կատարել փոփոխություններ ԿԿՀ «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի 02-Ն որոշման մեջ: